ՉԱՓԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎԲԿ-ՄԱԾՁԲ-21/98

ք. Վանաձոր 10.08.2021թ.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ գործող կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Վ.Մկրտչյանի, հետագայում՝ Պատվիրատու, մի կողմից և «ԻՆԷՔՍ» ՍՊԸ՝ գործող ՀՀ օրենսդրության և կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Է. Ապրեսյանի, հետագայում՝ Կատարող, մյուս կողմից

կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն Կատարողին պատվիրում է օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն պայմանագրով նախատեսված պայմաններով մատուցելու ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նժդեհի 2/42 հասցեում գտնվող շենք-շինությունների մասնակի չափագրման ծառայություններ:

1.2 Կատարողը պարտավորվում է աշխատանքները կատարել փուլերով՝ I փուլ- առկա փաստաթղթերի ուսումնասիրություն, II փուլ-մասնագիտական աշխատանքների իրականացում, III փուլ – փաստաթղթերի փաթեթի (հաշվետվության) կազմում և տրամադրում:

2. Պայմանագրի գործողության ժամկետը

2.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ԿՈՂՄԵՐԻ կողմից այն ստորագրելու պահից և գործում է 10 օրյա ժամկետով:

3. Վճարման չափը և պայմանները:

3.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրի 1 կետով նախատեսված աշխատանքների դիմաց ծառայությունների վճարի չափը հաշվարկված է սույն պայմանագրի մաս կազմող ծառայությունների մատուցման հաշվարկով, ըստ որի, այն կազմում է *25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:*

3.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության արդյունքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ արձանագրությունը ստորագրելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԿՈՂՄԵՐ-ի պարտավորությունները և պատասխանատվությունները

Պատվիատուն պարտավորում է.

4.1 տրամադրել պատվիրվող աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և հավաստի տեղեկություններ սույն պայմանագրով նշված անշարժ գույքի վերաբերյալ

4.2 ընձեռել հնարավորություն սույն պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքի փաստացի վիճակով հաշվառման, տեղազննության կամ մասնագիտական այլ գործողություններ անշարժ գույքի իրավական կարգավիճակի և պատվերի կատարման վերաբերյալ փաստերի և փաստաթղթերի ուսումնասիրություններ իրականացնելու համար

4.3 վճարել սույն պայմանգրի 3 կետով սահմանված վճարումը՝ նախատեսված ժամկետում

4.4 վերականգնել, փոխհատուցել այն անձանց կրած վնասները, որոնք կարող են առաջանալ իր կողմից տրված սխալ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հիման վրա և կրել պատասխանատվություն իր կողմից տրված տեղեկությունների նկատմամբ:

Կատարողը պարտավորում է.

4.5 ա) մատուցել խորհրդատվություն սույն պայմանագրին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ,
բ) իրականացնել փաստաթղթերի իրավաբանական ձևակերպումներ,

գ) ծառայությունների իրականացման անհնարինության դեպքում գրավոր կամ բանավոր կարգով պատվիրատուին տեղեկացնել պատվիրվող աշխատանքների կատարման հետ կապված՝ տարբեր բնույթի խոչընդոտների առաջացման պատճառով աշխատանքների դադարեցման մասին, ինչը հավասարազոր է պայմանագրի գործողության կասեցմանը կամ դադարեցմանը, որը չի առաջացնում նյութական և այլ իրավական պատասխանատվություն:

4.6 աշխատանքներն իրականացնել ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան՝ ապահովելով դրանց ճշտությունը և գաղտնիք պարունակող տվյալների չհրապարակումը:

4.7 Պատվիրատուի կողմից պատվերի կատարման համար նոտարական վավերացմամբ լիազորագիր տալու դեպքում՝ իրականացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքները առանց պատվիրատուի մասնակցության և միայն լիազորագրով տրված լիազորությունների շրջանակում:

5. Պայմաններ և եզրափակիչ դրույթներ

5.1 Կողմերը պատասխանատու չեն անհաղթահարելի հանգամանքների առաջացման (ֆորսմաժոր) հետ կապված, սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում, որոնք իրենց մեջ ներառում են հրդեհները, ջրհեղեղները, այլ բնական աղետները և դրանց հավասարեցված, չնախատեսված հանգամանքներ:

5.2 Կողմերի միջև սույն պայմանագրի իրականացման հետ կապված վեճեր ծագելու դեպքում վիճող կողմերը պետք է փորձեն վեճերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3 Պատվիրատուն տեղեկացված է այն մասին, որ Կատարողի կողմից մատուցված ծառայությունները և տրամադրված փաստաթղթերը կրում են միայն խորհրդատվական բնույթ:

5.4 Կատարողը իրավունք ունի միակողմանի դադարեցնելու սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը առանց այդ մասին Պատվիրատուին տեղյակ պահելու, եթե Պատվիրատուի կողմից խախտվել է սույն պայմանագրով նախատեսված պայմաններից որևէ մեկը:

5.5 Սույն պայմանագիրը կարող է դադարեցվել նշված ժամկետից շուտ՝

ա)երկօրյա ժամկետում՝ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի՝ 3-րդ կետով սահմանված կարգով վճարումները չկատարելու դեպքում,

բ) Կողմերի փոխադարձ համաձայնության առկայության դեպքում,

գ) Պատվիրատուի կողմից հրաժարվելու դեպքում՝ Կատարողին կատարած աշխանքների դիմաց վճարված գումարը ետ չվերադարձնելու պայմանով:

5.6 Պատվիրատուն հայտարարում է, որ վերոհիշյալ աշխատանքների պատվիրումը կապված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրեն պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նպատակով և սույն պայմանագրով մատուցվող ծառայությունները չեն առաջացնում այլ անձանց իրավուքներ, պարտավորություններ կամ այլ խնդիրներ:

5.7 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից և յուրաքանչյուրը տրվում է Կողմերին:

Պատվիրատու	**Կատարող**
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«ԻՆԷՔՍ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Բանակի 8	ք.Վանաձոր, Թամանցիների 14
«Հայբիզնեսբանկ» Վանաձորի մ/ճ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115000448411010 0	Հ/Հ 1570033845570100
ՀՎՀՀ 06945592	ՀՎՀՀ 06919097
Տնօրեն Վ. Մկրտչյան	Տնօրեն Է. Ասրեսյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

Ծառայության							
հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71311360	Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ում չափագրման աշխատանքների և հատակագծերի տրամադրման ծառայություն	դրամ	25000	1	Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42	մինչև օգոստոսի 30 2021թ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71311360	Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ում չափագրման աշխատանքների և հատակագծերի տրամադրման ծառայություն	25000	25000	25000	25000	25000

Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից և յուրաքանչյուրը տրվում է Կողմերին:

Պատվիրատու

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք.Վանաձոր, Բանակի 8
«Հայբիզնեսբանկ» Վանաձորի մ/ճ
Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592

Տնօրեն Վ. Մկրտչյան

Կ.Տ.

Կատարող

«ԻՆԷՔՍ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Թամանցիների 14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570033845570100
ՀՎՀՀ 06919097

Տնօրեն Է. Ապրեսյան

Կ.Տ.